# «RIA Money Transfer» առանց հաշվի բանցման դրամական փոխանցումների համակարգ

| N | Դաշտի անվանումը | Նկարագրություն |
|---|---|---|
| 1 | **Համակարգի անվանումը** | RIA Money Transfer |
| 2 | **Պաշտոնական կայքը** | www.riamoneytransfer.com |
| 3 | **Համակարգի օպերատորի անվանումը, գրանցման հասցեն,երկիրը** | Continental Exchange Solutions, Inc dba Ria Financial Services, 7001 Village Dr Suie 200 Buena Park, California 90621, U.S.A. |
| 4 | **Համակարգի գործունեության թույլտվության/լիցենզիայի/ գրանցման առկայությունը** | Առկա է |
| 5 | **Համակարգում պրոցեսինգ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման, հասցեն, երկիրը** | 1. Continental Exchange Solutions, Inc dba Ria Financial Services (FXOnline համակարգի միջոցով), 7001 Village Dr Suie 200 Buena Park, California 90621, U.S.A.<br>2. ООО «Финансовое Сервис Бюро» («Единое окно» համակարգի միջոցով), Украина, 03005, г. Киев, ул. Смоленская, 31-33, (3 эт.) |
| 6 | **Համակարգում քլիրինգ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման հասցեն, երկիրը** | Continental Exchange Solutions, Inc dba Ria Financial Services, 7001 Village Dr Suie 200 Buena Park, California 90621, U.S.A. |
| 7 | **Համակարգում վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման, հասցեն, երկիրը** | Կենտրոնացված վերջնահաշվարկի գործակալ առկա չէ |
| 8 | **Համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգերի անվանումները** | Xpress Money, Contact, Leader |
| 9 | **Համակարգի շրջանակներում ՀՀ ԿԲ կողմից գնահատված ծառայությունների տեսակը/տեսակները** | Առանց հաշվի բացման դրամական միջոցների փոխանցման ծառայությունը՝ փոխանցումների կատարումը ֆիզիկական անձ հանդիսացող շահառուին միջոցների՝ կանխիկ տրամադրման եղանակով |

| | | |
|---|---|---|
| 10 | **Համակարգում մասնակիցների միջև կիրառվող վերջնահաշվարկի կատարման սկզբունքները** | Համակարգում վերջնահաշվարկն իրականցվում է զուտ սկզբունքով, ըստ յուրաքանչյուր փոխանցման արժույթի, շաբաթական կամ ամսական պարբերականությամբ, սակայն զուտ բացասական դիրքը պայմանագրով սահմանված գումարը գերազանցելու դեպքում՝ հաջորդ օրը: Մասնակիցը պետք է ունենա EUR-ով հաշիվ եվրագոտում, և USD հաշիվ՝ ԱՄՆ-ում: Բացասական դիրք ունեցող մասնակիցը նախաձեռնում է փոխանցումը՝ մյուս կողմի թղթակցային հաշվին: |
| 11 | **Համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը** | Ներկայացված անդամակցության պայմանագրի նախագիծը եւ այլ փաստաթղթերը չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:<br><br>Ներկայացված փաստաթղթերում ապահովված են.<br>• ԿԲ խորհրդի 2014թ.-ի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 19-ի պահանջները;<br>• ՀՀ ԿԲ խորհրդի 2006թ.-ի հուլիսի 4-ի թիվ 342 Ն որոշմամբ հաստատված Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին ուղեցույցի պահանջները: |
| 12 | **Համակարգում կիրառվող տեխնիկածրագրային, հեռահաղորդակցման միջավայրը** | Համակարգում կիրառվող հեռահաղորդակցման ու կապի միջոցները, կիրառվող տեխնիկածրագրային միջավայրը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության դրույթները, ռիսկերի կառավարման մեխանիզմները, ինչպես նաև Համակարգի գործունեության անընդհատության ապահովման սկզբունքները գնահատվել են բավարար: |